ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(11)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(11)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(11)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(11)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անանարիկա Մ. Բոնֆանտի, Ռոբերտո Դան

Ասորեստանյան տարրերը բարձրավանդակի երկաթի դարի մշակույթում. Եղեգնաձորի գանձի զարդարված բրոնզե թասը (անգլ.) 8

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Բաղալյան

ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության և քարտուղարության որոշումները ԱՄԴԽՀ և ԽՍՀՄ կազմավորման մասին (1921–1922 թթ.) 20

Մեղա Գալստյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը 1918–1920 թվականներին (ըստ ՀՊԹ-ի նյութերի) 43

Անուշ Հարությունյան

ԼՂԻՄ-ի և Քրդստանի գավառի ժողովրդագրության որոշ հարցեր (1920-ական թթ.). համառոտ ակնարկ (անգլ.) 66

Վանիկ Վիրաբյան

Ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելի առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում (1919–1920 թթ.) 78

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Ասատրյան

Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում 19–20-րդ դարասկզբին (պատմաազգագրական ակնարկ) 104

Լիլիա Ավանեսյան

Մ. Դ. Իսաևի «Գորգերի արտադրությունը Անդրկովկասում» գիրքը և խորհրդային գորգարտադրության զարգացման սկիզբը Հայաստանում (ռուս.) 124

Միհիթար Գաբրիելյան

«Ազգ»-ի գիտական ուսումնասիրության բանաձևերը «Ազգագրական հանդես»-ում (առաջին համարի «հրատարակչից» բաժնի քննություն) 138

Ասպոիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.) 150

Քաքուշ Մալիասյան

Ջուղայի տարազը (18–20-րդ դդ.) 173

Համլիկ Պետրոսյան
Գորգի վերականգնման սկզբունքները.
միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ 182

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռոզաննա Ծատուրյան
Չարենցի հուշասրահը Չարենցավանում.
գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում 206

Նելլի Կարապետյան
Անձնական հիշողությունից հանրային հիշողություն.
ՀՊԹ երկու լուսանկար-տոհմածառի մշակութային կենսագրությունը 217

Հայկուհի Մուրադյան, Նժդեհ Երանյան, Համազասպ Աբրահամյան
Ազգային ինքնության կառուցումը և խորհրդային մշակութային
քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի
որոշ արխիվային նամակների 230

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մերի Ավետիսյան
Երևան քաղաքի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական
համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում 244

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Արուսյակ Ղազարյան
Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
հայ գրականության և արվեստի շտեմարանը 252

Լիլիա Ավանեսյան
Եվգենյա Գյուզալյան. ընդհատված կենսագրություն 260

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 263

DOI:10.56653//18290361-2023.11-150

Աստղիկ Իսրայելյան
Պատմական գիտությունների թեկնածու

Հայաստանի պատմության թանգարան
astghikisraelian@gmail.com

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻ ՈՍԿԵՐԻՉՆԵՐԸ (19–20-րդ դդ.)*

Հիմնաբառեր՝ արծաթագործություն, ոսկերչություն, հավաքածու, արհեստանոց, աշխարհիկ, եկեղեցական առարկա, կարգուկանոն:

Ներածություն

Հոդվածի հիմքում Հայաստանի պատմության թանգարանում պահվող առարկաների, արխիվային նյութերի տվյալներն են, գրավոր մի քանի աղբյուր, հեղինակի գրանցած տեղեկությունները[1]: Սա կարող է Վանի ոսկերչության մասին ուսումնասիրության մաս դառնալ: Ինչ վերաբերում է «ոսկերիչ» բառին, ի նկատի ունենք թե՛ ոսկե, և թե՛ արծաթե առարկաներ պատրաստող վարպետներին (Մալխասեանց 1944, հ. 3, 569), քանի որ «ոսկերչությունը թանկարժեք (ոսկի, արծաթ, պլատին), ինչպես և որոշ գունավոր մետաղներից գեղարվեստական կերտվածքներ ստեղծելու արհեստն ու արվեստն է» (Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 4, 2003, 569):

Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժնի ոսկերչական առարկաների հավաքածուի նմուշներից մի քանիսը Վանի նահանգի, Վանի գավառի՝ Շուշանց, Կողբանց, Լեզք, Կյուսնենց գյուղերից են, Կարճկանի գավառակի՝ Կարճկան, Եղեգիս գյուղերից, Շատախի գավառակի՝ Թաղ ավանից, Կաճեթ, Կաղբի, Կոճեր գյուղերից, Գյավաշի գավառակի՝ Ընձակ, Թիմար, Նարեկ, Փշավանց, Սարե գյուղերից, Մոկսի գավառակի Հարբերդ գյուղից, Արճեշի գավառի Ականց և Արծկե քաղաքներից, Առեն գյուղից, Բերկրիի գավառի Բերկրի քաղաքից և Գործութ գյուղից:

Հետազոտության համար որոշ փաստեր գրի են առնվել անմիջապես իրենցից՝ ոսկերիչներից, նրանց ընտանիքների անդամներից կամ ազգականներից: Իրանում վերաբնակված վանեցի ոսկերիչների մասին կարևոր են ոսկերիչ և քիմիկոս Օնանիկ Մանուկ-Խալոյանի (ծնված Կարսում 1914 թ., 1918 թ. ընտանիքով գաղթած Կրասնոդար, 1923 թ.՝ Թավրիզ) հաղորդած տեղեկությունները: 1982 թ. նա Իրանից եկել էր Հայաստան, իսկ 1988 թ.՝ տեղափոխվել ԱՄՆ: Մեկնելուց

* Ստացվել է 10.03.2023 թ., ուղարկվել է գրախոսման 16.03.2023 թ., ընդունվել է տպագրության 07.07.2023 թ.:

1 Երախտագիտությունս եմ հայտնում թեհրանաբնակ Սեպուհ Խաչատրյանին՝ արտասահմանում բնակվող վանեցի վարպետների հետ ինձ ծանոթացնելու և լուսանկարներ տրամադրելու համար:

առաջ՝ 1988 թ. նա նվիրեց հատուկ ինձ համար գրված իր երկու մեքենագիր հոդվածները. առաջինը՝ «Տպավորություններ իմ հուշերից Պարսկաստանի, Թավրիզ» և երկրորդը՝ «Թավրիզ քաղաքի վանեցի ոսկերիչների և վանեցի համայնքի մասին»: Սրանք հատկապես արժեքավոր են, քանի որ ինքն անձամբ է ճանաչել թուրքերի ջարդերից Իրան փախած վանեցի այն վարպետներին, որոնց մասին գրել է: Այս հոդվածներից որոշ նյութեր է հրատարկել իմ բարեկամ Հովսեփ Թոքատը՝ իր «Հայ արծաթագործ վարպետներ» գրքում՝ հրատարակված 2005 թ. Լոս Անջելեսում (Թոքաթ 2005, 241–242):

Վասպուրականի հնագույն շրջանի ոսկերչության մասին հստակ տեղեկություններ են տալիս հնագիտական պեղումների միջոցով հայտնաբերված հրաշալի նմուշները և գրավոր աղբյուրները, ինչպիսին է, օրինակ Լուվրի աղյուսակի Սարգոնի սեպագիր տեքստը, որը մանրամասնորեն հաղորդում է Ք. ա. 8-րդ դ. սկզբների ոսկերչական առարկաների մասին: Հայտնի հնագետ Բ. Պիոտրովսկին նշում է, որ Սարգոնի տեքստը վկայում է ոսկու մեծ քանակության մասին Մուսասիրում՝ Ուրզանա թագավորի պալատում և Մուսասիրի տաճարում: Այստեղից հայտնի է դառնում, որ ուրարտական վարպետները բազմապիսի առարկաներ պատրաստելիս տարբեր եղանակներ են կիրառել՝ այդ թվում կոփման, ձուլման, ոսկեզօծման, արծաթապատման եղանակները և որ ոսկի կար Սղերդ լեռան շրջանում՝ Վանա լճի հարավում: Բայց, մեծ քանակությամբ ոսկե առարկաներ պատրաստում էին նաև հարևան երկրներից բերված ոսկին ձուլելով: Ուրարտացիները տեխնիկական բարձր արվեստի էին հասել նաև արծաթե առարկաներ պատրաստելու գործում: Մուսասիրի տաճարում հսկայական քանակությամբ արծաթե իրեր էին պահվում (Пиотровский 1959, 182–183):

Նույնիսկ մեկ առանձին առարկա կարող է շատ պատկերավոր ու խոսուն լինել, կարևոր՝ տարբեր տեսանկյուններից՝ նյութի, ձևի, կառուցվածքի, պատրաստման եղանակի, բովանդակության: Այդպիսին է, օրինակ, Ուրարտական թագավորությունում Ջիվիեյում (նաև՝ Ջիվան, Ջուանի, Հակոբյան և այլք 1988, հ. 2, 308) Ռոման Գիրշմանի պեղումներից գտնված ուրարտական Ք. ա. 7-րդ դ. վզնոցը, որի վիշապները չեն տարբերվում 18–20-րդ դդ. Հայաստանում ամենուրեք տարածված նույնանման վզնոցների վիշապների ձևից ու կառուցվածքից և ցույց են տալիս ուրարտական մշակույթի շարունակականությունը: Վերջին շրջանի վիշապիկներով վզնոցներից սրանք տարբերվում են վիշապների միջև շարված վերադիր հատիկներով ուլունքներով, որոնց մասին Ռ. Գիրշմանն արդարացիորեն նշում է, թե հատիկազարդումը բնորոշ է ուրարտական ոսկերչական արվեստին (Ghirshman 1964, 114–115) որն, ի դեպ, նույնպես շարունակվում է մինչև այսօր:

Վանի թագավորության ոսկերչական առարկաներից հատուկ ուշադրության է արժանի նաև 1956 թ. Կարմիր բլուրում գտնված ուրարտական անոթի ինքնատիպ կափարիչը (Հայաստանի պատմության թանգարան (այսուհետ ՀՊԹ) Հն. 2010/184), որը վերլուծել է Ս. Հմայակյանը (Հմայակյան 2003, 107–108): Սա ցույց է տալիս, որ ինչպես բուն անոթը, այնպես էլ խուփը կարող է արվեստի բարձրարժեք նմուշ լինել թե՛ պատմական առումով, թե՛ զարդանախշման բովանդակությամբ ու տեխնիկայով, և թե՛ առավել ևս՝ արձանագրությամբ, ինչպես տվյալ դեպքում:

Նախքան Վանի թագավորության շրջանը, հնագիտական նյութերը ցույց են տալիս, թե ոսկերչական արվեստն ինչպիսի մակարդակ ու տեսականի է ունեցել Հայկական լեռնաշխարհում ավելի վաղ ժամանակներում, իսկ գտնվելու տեղերը (պաշտամունքային վայրեր՝ սրբատեղիներ, բնակատեղիներ, դամբարաններ և այլն) հուշում են դրանց գործածության ձևերը, գաղափարական իմաստներն ու անհրաժեշտությունը այս և այն աշխարհներում: Բնական է, որ այսպիսի հարուստ անցյալ ունեցող արհեստը պետք է բարգավաճեր նաև հետագայում և տարածվեր աշխարհագրորեն:

Վասպուրականի միջնադարյան ոսկերչության առնչությամբ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում հայ պատմիչները: 9–10-րդ դդ. Թովմա Արծրունին, օրինակ, նկարագրում է Աղթամարի եկեղեցին՝ լի ոսկեհուռ զարդերով, ոսկեզօծ պատկերներով, պատվական ակներով ու մարգարտահյուս պես-պես զարդերով երևելի ու փայլուն սպասքը: Նա հիշատակում է Գագիկ Արծրունու թագը՝ ընդելուզված Հնդկաստանից ու Թեբեից բերված ակներով, պալատական ճոխ զարդարանքը, մարդկանց ու նժույգների շքեղաշուք զարդերը և այլն (Թովմա Արծրունի և Անանուն 1985, 453, 463, 471):

Միևնույն ժամանակահատվածի մասին Վ. Վարդանյանը գրում է. «Վասպուրականում բարձր կատարելագործման էր հասել նաև ոսկերչությունը, որը հինավուրց ու մեծահարգ արհեստներից էր: Ինչպես երևում է մատենագրական տվյալներից, ոսկուց ու արծաթից առարկաներ պատրաստելիս օգտագործվել են ... ոսկեզօծելը, արծաթաջրելը, ընդելուզելը, դրվագելը և այլն... Դրվագման տեխնիկան օգտագործվել է նաև եկեղեցական սպասների, նույնիսկ սյուների ոսկեզարդման համար... Հաճախ ոսկերչական տեխնիկան անբաժան էր իրերը թանկագին քարերով ընդելուզելուց» (Վարդանյան 1989, 40):

Վանի ոսկերչական արվեստի խոսուն նմուշներ են Էջմիածնի Մայր տաճարում պահվող եկեղեցական առարկաները, ինչպես նաև Էջմիածնի վանքի ու Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագիր և տպագիր մատյանների կազմերը:

Վանի, Աղթամարի, Լիմ կղզու և Արծկե քաղաքի մատյանների կազմերը ցույց են տալիս, թե Վասպուրականում ոսկերչական ինչպիսի եղանակներ են կիրառվել միջնադարում: Կազմերն ունեն ձուլածո, արծնապատ, ոսկեզօծ, դրվագված, փորագիր, զուգաթելով, գնդիկանման՝ գլանակերտ շարաններով նախշեր, կաշվին գամերով ամրացված գնդիկներ, ծաղկազարդ գծային դրվագում, գնդիկաշար զուգաթել, ակներով ընդելուզում, շղթաներ, ճարմանդներ և այլն: Ուշագրավ են քարերի ընդելուզման ձևերը: Սրանցից մեկը տափակ թերթի միջոցով պատրաստված ատամնավոր շրջանակն է, որը պահում է ակը: Մյուսը մի քառակուսի է, որի կենտրոնում տեղավորված է ակը, իսկ շուրջն արծաթի բարակ շերտն է մնում՝ խորը փորագրելով մնացած տարածության կենտրոնը, բարձր թողնելով եզերքը՝ դրանք վերածելով դեպի ներս դարձած ութ կիսաշրջանների: Գրիչով կատարված այսպիսի ընդելուզումը 18–19-րդ դարերում տարածվել էր նաև Պոլսում: Ընդելուզման մյուս ձևը վարդականման արծաթե թերթի վրա մածուցված շրջանակի մեջ ամրացվող քարով է: Սա միշտ տարածված է եղել Վասպուրականում և ամենադասական ձևն է:

Ինչպես ընդելուզման տեսակներն, այնպես էլ առհասարակ զարդանախշման նշված բոլոր եղանակներն օգտագործվել են նաև աշխարհիկ առարկաներ ու զարդեր պատրաստելիս: Վասպուրականի արծաթագործական ու ոսկերչական նախշերի որոշ դրվագներ իրենց նմանակներն ունեն հայկական այլ վայրերի ու նամանավանդ այլ ժամանակների աշխատանքներում, ինչպես օրինակ Վանի 16-րդ դ. մատյանի կազմի զուգահեռ շղթաներն ու Դվինի պեղումներից հայտնաբերված 7–10-րդ դդ. զարդերը (Տեր-Ղևոնդյան 1963, 102–108):

Վարպետները

Կարելի է սկսել Պոլսի վանեցի ոսկերիչներից. նրանց մասին Հ. Ստեփանյանը գրում է. «Բազմաստիճան այս արվեստը, որը մի քանի արհեստների միաձույլ միասնություն է հանդիսանում, հայերի համբավը տարածել է ողջ աշխարհում: Դեռևս 1534 թ. Կանունի Սուլթան Սուլեյման Ա-ն Վանից ու շրջակայքից բազմաթիվ հայ արհեստավորների, մասնավորապես վարպետ ոսկերիչների, բռնագաղթել է տվել Պոլիս (Սամաթիա): Դրանց թվում հայտնի են եղել Բահա Ջենոն Քազաքյանը, արծաթագործ Գասպարը: Վարպետ արհեստավորների Պոլիս բռնի բերելը շարունակվել է անընդհատ, մյուս սուլթանների կողմից ևս» (Ստեփանյան 2011, 584):

Վանի նահանգում աշխատող վարպետներից միայն մի քանիսի անուններն են հայտնի: Բարեբախտաբար պահպանվել է Վանի 1693 թ. ոսկով, արծաթով, ակներով զարդարված Ավետարանի կազմի հեղինակ Տեր Սահակի անունը (Մկրտչյան և այլք 1997, N 45):

Լիմի Սբ. Գևորգ եկեղեցու մասունքով խաչը 1746 թ. պատրաստել է Հարություն Կոստանդնուպոլսեցին (Մկրտչյան և այլք 1997, N 9): Ձուլածո արծաթե այս խաչը զարդարված է դրվագումով, զուգաթելով, հատիկազարդմամբ, ակներով, ոսկեզօծմամբ և փորագրությամբ:

Ոսկերիչ Կարապետ Հայրապետյանը 1883 թ. Վանում պատրաստված մեռոնի կաթսայի հեղինակն է, որն արծաթից ու պղնձից է, զարդարված՝ գունավոր քարերով (Մկրտչյան և այլք 1997, N 23):

Առհասարակ, ընդունված էր, որ հոգևորականները ոսկերչական գործեր ստեղծեին. օրինակ՝ Էջմիածնի վանքի թանգարանում պահվող Սբ. Հակոբ Մծբնեցի հայրապետի աջը 1709 թ. Աբրահամ վարդապետն է սարքել տարբեր տեխնիկաների համադրությամբ (ձուլում, դրվագում, ոկեզօծում, արծնակիտում, փորագրություն)՝ նռնաքարերով և ամետիստներով (Մկրտչյան և այլք 1997, N 5):

Վանքերին կից աշխատող ոսկերիչների վերաբերյալ Վ. Աբրահամյանը նշում է. «...գավազաններից մեկը պատրաստված էր 1777 թ. Վանում, սուրբ Աստվածածնի եկեղեցու մոտ եղած հայ ոսկերիչների ձեռքով»: Մեկ այլ տեղ գրում է. «Վանում հատիկավոր գործի վրա աշխատող վարպետները կենտրոնացած էին Վան քաղաքի ս. Նշան եկեղեցու մոտ» (Աբրահամյան 1956, 132): Թեև վարպետների մեծ մասի անուններն անհայտ են, նրանց ստեղծագործությունները՝ բազմապիսի տեխնիկաների համադրումով, դասագրքային արժեք ունեն, ինչպես, օրինակ Էջմիածնի Մայր տաճարի Ավետարանի կազմը՝ պատրաստված 1760 թ. Մոկսում (Մկրտչյան և այլք 1997, 90–91):

Վանեցի ոսկերիչ Հակոբ Տեր-Արիստակեսյանի վկայությամբ 19-րդ դարի 90-ական թթ. միայն Վան քաղաքի ոսկերչական արհեստանոցների թիվը հասնում էր 70-ի, ավելի ուշ՝ դարավերջին՝հասել էր 120-ի (Տեր-Արիստակեսյան, ՀՊԹ արխիվ, N 141, 8–10):

Արհեստն, ըստ կատարման եղանակների, բաժանվում էր ճյուղերի՝ փորագրություն, ձուլում, մանրարուրք, սեղմում, սևադում, արծաթաթիթեղ, ոսկեջուր և այլն: Վանի վարպետները 19-րդ դարի վերջերին և մինչև 20-րդ դարի սկզբի գաղթը իրենց արհեստանոցներում ունենում էին 18–20 աշակերտ (Աբրահամյան 1956, 131–132): Ամբողջ աշխատանքը կատարվում էր ձեռքով, մեքենայացում չկար: Հայկ Տեկանցը շեշտում է հատկապես այս հանգամանքը՝ վանեցի վարպետների մասին ասելով. «Սիրելի ընթերցող, դուն չես կրնար զսպել քու անկեղծ հիացումդ երբ տեսնելու ըլլաս մեքենական արտադրութեանց հետ յաջողութեամբ մրցող, և երբեմն ևս՝ գերազանցող վանեցի այդ խղճուկ արհեստաւորներուն կերտած արհեստաւորական գլուխ գործոցները: Դուն խոր հիացմունքով այդ գեղարուեստական արտադրութեան մտիկ տալէ վերջ՝ չես ուզեր համոզուիլ թէ ատոնք զուտ ձեռքի արտադրութիւններ լինին: Յաճախ այնքան գեղեցիկ են ատոնք, նուրբ ու ճաշակաւոր, որ դուն հոն կարող ես գտնել և նկարչութիւն, և քանդակագործութիւն և ճարտարապետութիւն: Հիացումդ աւելի պիտի կրկնապատկուի, երբ նկարագրեմ քեզ, թէ ի՛նչ սպաննիչ միջավայրի մէջ և որպիսի~ աննպաստ պարագաներու տակ է որ հայ արհեստաւորն գործած է այդ յավէտ պանծալի յառաջադիմութիւնը» (Տէվկանց 1911, IV, 158):

Վանեցի արհեստավորների արտադրանքը տարածվում էր Թուրքիայում, արտահանվում էր Եվրոպա, Աֆրիկա, Ամերիկա: «Պոլիս ուղարկում են Պոլսում և Եվրոպական զանազան երկրների քաղաքներում ծախելու համար... արծաթեայ զարդեր, մանաւանդ ծխատուփ... Ուղղակի Եւրոպա ուղարկուելիք վաճառանիւթերը ուղարկում են մինչև Տրապիզոն, այնտեղ ծախւում են կամ այնտեղից փոխադրւում են Մարսէյլ... Իսկ թիւրքական նահանգների քաղաքներից... բացի... Պոլսից, Տրապիզոնից և Կարնից, Հալէբ, Դիարբէքիր, Սղերդ, Բիթլիզ և այլ քաղաքներ ստանում են Վանից նոյնպէս կաշի, մեղր, ձուկ, իւղ, արծաթեայ զարդեր, բորակ, սխտոր, բուրդ, գեաժ, կտաւատի ձէթ և այլն» (Ծերուկ 1904, N 8, 18):

Կրկին 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի վերաբերյալ Ծերուկը շարունակում է. «Ոսկերչութիւնը Վանի հին արհեստներից է, բայց մինչև 90-ական թուականները բոլորովին աննշան և անկարևոր արհեստ է համարւում, իսկ վերջին 15 տարուայ ընթացքում այնքան զարգացաւ, որ դարձաւ Վանի ամենակարևոր արհեստներից մեկը, որի համբաւը ոչ միայն Թիւրքիայում, այլ նոյնիսկ արտասահմանումն էլ հռչակուեց: Այժմ ոսկերիչներին երկու խմբի կարելի է բաժանել. առաջին կամ հին խմբին պատկանողները շինում են հին ճաշակին համապատասխանող արծաթէ զարդեր-կոճակ, գինտ, ապարանջան, մատանի և այլն: Իսկ երկրորդ կամ նոր խմբին պատկանողները շինում են նոր ճաշակին գոհացնող գեղեցիկ արծաթէ իրեր, որոնց մէջ ամենահռչակուածն է արծաթէ ծխատուփը. պատրաստում են նոյնպէս արծաթից զանազան տեսակ խմիչքների բաժակներ, պնակներ իրենց պարագաներով, ճաշի գդալ, դանակ, պատառաքաղ, անուշահոտ

իղերի, օշարակների սրուակներ, հեշտաեռ, սանր, գօտի, բրոշ և այլն: 1902 թուին միայն 7000 հատ ծխատուփ է ուղարկուած Վանից Կարին, Տրապիզոն, Պոլիս, Եգիպտոս, Եվրոպական և ասիական Թիւրքիայի զանազան քաղաքներ: Վանի ոսկերիչներից մէկի շինած հեշտաեռը անցածները նահանգապետի կողմից նուէր ուղարկուեց Պոլիս իբրև կայսերական պալատի զարդ: Տարեկան աւելի քան 100 փութ արծաթ է մտնում Վան, որից պատրաստուած իրեղէնները գրեթէ նոյն քանակութեամբ ուղարկւում են դուրսը: Վանի արհեստների մէջ միայն ոսկերչութիւնն է, որ արտահանութեան նիւթ է տալիս վանեցիներին և տարեկան իբրև զուտ շահ մօտ 3000 լիրա (25000 ռուբլի) գումար է մտցնում Վան: Կան շատ հմուտ և տաղանդաւոր ոսկերիչներ, որոնք սակայն աղքատութեան պատճառով չկարողանալով 30–40 լիրայի (3–400 ռուբլու) դրամագլուխ ճարել՝ հեռանում են ասպարիզից...

Փորագրութիւնն էլ թէև հին արհեստ է համարւում, բայց սա էլ իր նախկին վիճակից բոլորովին կերպարանափոխուել է. 30–40 տարի առաջ մէկ–երկու փորագրիչներ կային Վանում, որոնք կնիքներ փորելուց զատ ուրիշ գործ չունէին, սակայն ոսկերչութիւնը իր զարգացումով դրդեց փորագրութեան առաջադիմութեան: Այժմ փորագրութիւնը ոսկերչութեան մէկ կարևոր ճիւղն է. փորագրիչները ոսկերիչների շինած արծաթէղենները զարդանկարների քանդակներով զարդարում են... գեղեցկացնում և շքեղացնում... փորագրիչը շունչ ու կենդանութիւն է տալիս արծաթի զանգուածներին... Արծաթեղէնների վրայ մարդու պատկեր չի քանդակւում, որովհետև՝ ինչպէս յայտնի է՝ Մահմէդն արգելում է, իսկ դրա փոխարէն գործածւում է թիւրքական շքեղ «արմա»-ն (զինանշան, թուղրան): Քանդակների մէջ տիրապետող է ծաղկանկարը... Շէնքերի, քաղաքների, հրապարակների և բնութեան զանազան տեսարանների պատկերներ էլ գործածւում են փորագրութեան մէջ: Ներկայումս փորագրիչ վարպետների թիւը հասնում է 25-ի (Վանի արհեստաւորներից միայն ոսկերիչներն ու փորագրիչները վարպետութեան վկայական ունին) (Ծերուկ 1904, N 8, 28–29):

Ինչպես նշում է Վ. Աբրահամյանը, սևադով աշխատելը արտակարգ մեծ տարածում գտավ սկսած 1860–1870-ական թվականներից: Մեծ քանակությամբ սևադազարդ առարկաներ էին արտահանվում Կ. Պոլիս ու Թուրքիայի զանազան այլ քաղաքներ: Հետագայում սևադի ճյուղը տարածվեց նաև Կովկասում (Մայկոպ), այնտեղից էլ անցավ Ռուսաստան (Տուլա) (Աբրահամյան 1956, 129–131): «Սևադա»- ի եղանակը արևմտահայ ոսկերիչներից, մասնավորապես վասպուրականցիներից է անցել, տարածվել արաբական հարևան երկրներում, իսկ աղավաղված «սևադա» բառը դարձել է «սավաթ» (Ստեփանյան 2011, 591)[2]:

Մի քանի տարի անց գլանի («ցիլինդր» կոչվող մեքենայի) գործածությունն ի հայտ եկավ, որը բավականին հեշտացրեց վարպետների գործը: Գլանումն արծաթե տախտակ սարքելու համար էր, նախքան այդ մուրճով սալի վրա ծեծելու եղա-

2 Սևադի գործածությունը հայտնի էր դեռևս Վանի թագավորությունում: Ինչպես նշում է Ս. Հմայակյանը, առաջին վանտոսպյան լուսնազարդը՝ պատրաստված արծաթոսկուց, հայտնաբերվել է Թոփրաք-կալեի պեղումների ժամանակ՝ մի տուփի մեջ, որտեղ եղել է ծծմբարծաթ, որն այն ժամանակ օգտագործել են սևադելու համար (Հմայակյան 2007, 175–176):

նակով էին աշխատում: Ինչպես նշում է Տէվկանցը. «Ոսկերիչ արհեստաւորներն կսկսէին օր աւուր յառաջադիմել և զարգանալ, ծնունդ տալով հանճարեղ վարպետներու, գրաւելով պատուաւոր դիրք մը Վանի արհեստաւորներու մէջ: Յաճախորդներու կողմէն կարկուտի նման տեղացող գործերն կուգային շահու ոսկեդարը բանալու ալեկոծուող ոսկերիչ արհեստաւորներուն, որոնց հռչակը կ'սկսէր կամաց կամաց և արձագանք գտնել նաև հեռուներ: Ժողովուրդը, շլացած այդ իրականութենէն, սկսաւ գրոհ տալ դէպի ոսկերչութիւն. հասարակին հետ հարուստն ևս ցանկացաւ իր զաւակն ոսկերիչ տեսնել» (Տէվկանց 1911,158):

19-րդ դարի 90-ական թվականներին Պոլսից Վան մուտք գործեց նաև էլեկտրականությամբ ոսկեջրման եղանակը, մինչ այդ այն շատ պրիմիտիվ ձևով էր կատարվում՝ սակավաթիվ մարդկանց կողմից (Տեր-Արիստակեսյան, ՀՊԹ արխիվ, N 141):

Ոսկերչական արհեստանոցներում աշխատում էին օրը 10–12 ժամ (Տէվկանց 1911, 156): Ըստ Վահան Խանջյանի, յուրաքանչյուր վարպետ, միջին հաշվով, 2–3 աշակերտ ուներ: Նրանց ուսանելու ժամկետը 3-ից 4 տարի էր, հարկ եղած դեպքում՝ ավելի: Աշակերտը չէր վարձատրվում մինչև ենթավարպետ դառնալը (Խանջյան, ՀՊԹ արխիվ, N 100–104, II, 19): Ուշագրավ են ոսկերիչներին բնորոշ օրինակելի վարքի կանոնները: Վ. Խանջյանը գրում է. «Շատ արհեստավորներ կունենային իրենց անսավ պաշին (արհեստավորների գլխավոր վարպետը) և կունենային որոշակի կազմ՝ իր անդամներով. եթե մի արհեստավոր անորակ և կեղծ գործ պատրաստեր, կազմի մարդիկ կբռնեին այդ կեղծ գործը և իրենց նիստի (ժողովի) որոշմամբ կդատեին և կտուգանեին»: Նա նշում է նաև, որ արհեստավորները կիրակի օրն աշխատելն ամոթ էին համարում: Այդ օրը նրանք եկեղեցի պետք է գնային (Խանջյան, ՀՊԹ արխիվ, N 100–104, II, 19): Իմիջիայլոց, հայերը միջնադարում էլ էին քաղաքներում վերահսկում արհեստավորներին՝ պահանջելով արտադրանքի բարձր որակ և նյութի մաքրություն (Խաչիկեան 1999, 308):

Հայկ Տէվկանցը թվարկում է Վանի վարպետների սարքած ոսկե և արծաթե առարկաները. «Սկսեալ մատանիներէն, ականջի օղերէն, ապարանջաններէն, գոտիներէն, ծխամորճներէն, չիպուխներէն, սիգարի և այլ տուփերէն մինչև մտրակներ, թուր և դաշոյններ, կոճակներ, անուշի, խահուէի, քաղցրահամ ըմպելիքների, օղիի, ջրի թասեր և բաժակներ, մատնոց և ասղերուններ, գօստօններ (ժամացոյցի կապ), շաքարամաններ, դրամապանակներ, սրտի և գլխի պոռշկաներ և ասեղներ, հայելիներ, ձիու թամբ ու համէտներ, անուշեղէններու թափխներ (սկաւառակ), սանտրեր, սպիչկայի տուփեր, պատկերի շրջանակներ, պուխուրդաներ (խնկաման) և եկեղեցական անօթներ, գդալ, պատառաքաղ և դանակներ, եազի թախմին (գրելու պարագայք), հեշտաեռ և երկրագունդ և այլն: Ասոնք բոլորը վանեցի ոսկերիչ արհեստաւորներուն աշխատութեան նիւթ մատակարարող «մասունք բանից» կը կազմեն, որոնցմով նա այնքան մեծ հռչակ հանած է, որ պատիվ կը բերի վանեցի արհեստաւորին, մասնաւորապէս՝ և ամբողջ ազգին ու երկրին ընդհանրապէս» (Տէվկանց 1911, 157):

Հայկ Տէվկանցը վարպետներից մի քանիսին բնութագրում է որպես Վասպուրականցի հայ ոսկերչութեան փառաց աստղեր. «Յովհաննես Պոռոզանջեան,

մի անձնավորութիւն, որուն կարելի է անուանել հանճարի և ձիրքի մարմնացում. նշանաւոր իր ամեն կարգի նուրբ և ճաշակաւոր գործերով, որոնք մարդուս հիացում կը պատճառեն: Հրաշալի է իր «Գարուն, աշուն, ամառ և ձմեռ» գործը, որ իր հիւրանոցը կը զարդարէ:

Գէորգ Գոյումջիպաշեան. զարգացած և ձեռներէցութեան ոգի կրող միակ յարմար ոսկերչապետն հիմակուան, նշանաւոր իր գեղեցիկ «երկրագունտով» և այլ ճաշակաւոր գործերով:

Տիգրան Աւագեան, որ իր մշտագարուն կատակաբանի բնաւորութեամբ կը պատրաստէ նոյնպէս կարող վարպետի մը վայել գեղեցկութեան թափսիներ, զառֆեր, ջրի և այլն անուշեղէններու ամաններ և այլն:

Ապա Մարգար Կալամքարեան, հին վարպետներէն նմուշ մը. օժտուած տարօրինակ անմատչելի բնաւորութեամբ. նշանաւոր իր «հեշտաեռներով» և այլ գեղեցիկ շէնքերով:

Ասոնք արհեստաւորներու այն կարգին կը պատկանին, որոնք ուղղակի կարող են ստեղծագործել, արհեստն օժտելով նորանոր հաճելի նորութիւններով և մօդաներով, զուտ իրենց հանճարի ուժով...

Ասոնցմէ զատ դեռ կան շատ նշանաւոր վարպետներ, որոնք զանազան մասնաճիւղերու մէջ նշանաւոր են, բայց ատոնք ստեղծող լինելէ առաջ կրկնող են կամ ընդօրինակող առաջլընէ շինուած ձևերուն, շատ շատ զանոնք մշակող և աստիճան մը զարգացուցող» (Տէվկանց 1911, 160): Անկասկած, հենց այս վարպետներին պետք է երախտապարտ լինենք նախորդներին կրկնելու համար, քանի որ հին վարպետներն այնքան սքանչելի նմուշներ էին ստեղծել, որ հետագա սերունդներին դրանք փոխանցելը շատ արժեքավոր էր և ամենակարևորը՝ բարձր ճաշակով: Այդպիսի մարդկանց շնորհիվ է, որ կարելի է ավելի ամբողջական պատկերացում կազմել Վանի ոսկերչական արվեստի մասին: Վանեցիների գեղագիտական ընկալումներն ու զգացողությունը հետևյալ կերպ է մեկնաբանում Տէվկանցը. «Դրախտի գեղեցկութեամբ օժտուած բնութեան հրաշալի տեսարանները կուգան արթնցնել վանեցու գեղարուեստասէր սրտին մէջ ճաշակը գեղեցիկ արուեստներու, մղելով զանոնք գեղարուեստի մոգական բազուկներու մէջ... Ահա թէ ինչու Վանէն չեն պակասած, ո՛չ նշանաւոր արուեստագէտներ, ո՛չ մեծ մարդիկ և ալ անուանի բանաստեղծներ. նոյն իսկ արիւն և արտասուք ծովացած օրերուն...» (Տէվկանց 1911, 160):

Հարկ է նշել, որ Գևորգ Գոյումջիբաշյանին հիշատակում է նաև վանեցի ոսկերիչ Հակոբ Տեր-Արիստակեսյանը: Նա գրում է, որ 1910 թ. Թուրքական կառավարությունը կազմակերպել էր Վանի արհեստավորների ձեռքի աշխատանքների ցուցահանդես, որտեղ երկու հոգի ստացել էին ոսկե մեդալներ: Նրանցից մեկը Գևորգ Գոյումջիբաշյանն է եղել, մյուսը՝ Սահակ Տեր-Արիստակեսյանը (Տեր-Արիստակեսյան, ՀՊԹ արխիվ, N 141): Սահակ և Հակոբ Տեր-Արիստակեսյանները Վանի լավագույն ոսկերիչներից էին: Նրանք ավանդական եղանակներից զատ, Վանում սկսեցին լուսանկարից արծաթի վրա պատկերը նույնությամբ փոխանցելու արհեստը սովորեցնել: Այս երևույթին է անդրադարձել նաև Ատրպետը. «Վանի ոսկերիչ քանդակագործները չբաւականանալով աւանդական քանդակագործի

կալամներով, նրանք լուսանկարիչներից սովորական արծաթէ տուփերի վրայ լուսանկարում, փորագրում, արծնում, սևադում էին բնանկարներ և զանազան սիւժետային պատկերներ»: Նա նաև փորագրության մասին է գրել. «Այս կարգին չեմ վարանիր յիշել նաև տեղւոյս փորագրութեան արուեստն, որ եթէ եղած չըլլայ, հարկաւ ոսկերչութիւնը պիտի չունենար իր արդի փայլն ու համբաւը» (Բազէեան 2020, 396–398: Ատրպետ ՀՊԹ արխիվ, 147): Կրկին Գևորգ Գույումջիբաշյանին վերադառնալով, նշենք, որ նրա ստեղծած գլուխգործոցներից մեկի՝ «երկրագնդի» նկարագրությունը Կ. Բազեյանը մեջբերում է «Բիւզանդիոնից». «Ասոր վրայ «Սավադի» սկզբունքով փորագրուած են նաև երկրի բնական բաժանումներ, գօտիներ, աստիճաններ և այլն, Թուրքերէն կամ Հայերէն գրուած անուններով: Բայց ամենն այս չէ այլ երկրագունդի փորին մէջ վարպետութեամբ զետեղուած են ժամացոյցի բոլոր պարագաները, որոնց միջոցաւ այն գունտն իր առանցքին վրայ կը դառնայ ինքնին 24 ժամու շրջանով, որով այլ և այլ երկիրներու մէջ մի և նոյն ատեն եղած ցորեկն ու գիշերը կրնան հասկացուիլ: Գունտի հարաւային բևեռին վրայ հաստատուած է խոշոր կողմնացոյց մը, իսկ հիւսիսայինին վրայ զետեղուած է արծաթ թռչնիկ մը...» (Բազէեան 2020, 398–399: Գ. Լ. 1900, 1):

Սահակ և Հակոբ Տեր-Արիստակեսյանները վանեցի առաջին ոսկերիչներից էին, որ եկան Երևան և 1890-ական թթ. հիմնադրեցին իրենց արհեստանոցը: Նրանք շատ շուտով հայտնի դարձան, և երևանցիների տներում հայտնվեցին նրանց պատրաստած կենցաղային ոսկերչական իրերը, իսկ եկեղեցիներում՝ բարձրաքանդակներով ու էմալով զարդարված ծիսական առարկաները: Տեր-Արիստակեսյանների աշխատանքները գնվում էին նաև Թիֆլիսում, Բաքվում և Մոսկվայում: Սակայն եղբայրները դրանով չեն բավարարվում, նրանք իրենց արհեստը կատարելագործելու նպատակով մեկնում են Մոսկվա, այնուհետև Գերմանիա: Եղբայրներից մեկը Եկատերինբուրգ (Ուրալ) է գնում քարամշակության և ակնագործության մեջ հմտանալու համար:

1915 թ. գաղթի ժամանակ Եղբայրական օգնության կոմիտեի աջակցությամբ 30 վանեցի արհեստավորներ տեղափոխվեցին Երևան, մի քանիսն էլ՝ Թիֆլիս: Եվ այդ կազմակերպության շնորհիվ արհեստանոցներ բացվեցին այս քաղաքներում: Մեծ զարկ տրվեց արծաթագործության փորագրության ճյուղին: Որոշ ժամանակ անց Եղբայրական օգնության կոմիտեն դադարեց աջակցել արհեստավորներին և նրանք իրենց գործն ինքնուրույն ուժերով շարունակեցին: Սակայն 1918 թ. սկսվեց թուրքական արշավանքը և երիտասարդ արհեստավորները զինվորագրվեցին բանակ, ոմանք էլ արհեստը թողնելով անցան այլ աշխատանքի:

Հայաստանում 1920 թ. խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Հակոբ Տեր-Արիստակեսյանը Լուսավորության ժողովրդական կոմիսարիատի (Լուսժողկոմատի) աջակցությամբ բաց է անում ոսկերչական դպրոց-արհեստանոց, որտեղ թվով 50 որբ երեխաներ են ուսանում: Շուտով նրան է միանում իր եղբայրը՝ փորագրիչ Սահակը: Արհեստանոցը մեծանում է: Այդ ժամանակ Երևանում «Վան» կոչվող երկու արհեստանոց կար:

1924 թ. վերջերին Լուսժողկոմատի կողմից հովանավորվող դպրոց-արհեստանոցը դադարում է գոյություն ունենալ: Բայց «Գեղարդ» տեխնիկումին կից

հիմնվում է նոր արհեստանոց՝ իր առևտրական կետերով: Որոշ ժամանակ անց Լուսժողկոմատի ղեկավարները փակում են նաև այդ արհեստանոցը:

Երևանում վանեցի վարպետների ղեկավարությամբ հիմնադրվում է արտելային համակարգ: Կազմակերպվում է երկու արտել՝ մեկը «Վան», մյուսը՝ «Վասպուրական»: Արտելները օժանդակություն չէին ստանում պետությունից և գործերի սակավության պատճառով մի քանի տարուց հետո «Վասպուրական» արտելը լուծարվեց: Սկսեց գործել «Արծաթագործ» արտելի ոսկերչական ցեխը, որը պետական օժանդակություն էր ստանում և գեղարվեստական արտադրանք տալիս (Տեր-Արիստակեսյան, ՀՊԹ արխիվ, N 141):

Երևանի վանեցի ոսկերիչների մասին կարևոր տեղեկություններ կան 1916 թ. «Հայկական բանբեր»-ում («Армянский вестник»). «Այս տարվա փետրվարի վերջին Վանի փախստականների համար նոր գործ ստեղծվեց Երևանում:

Ես խոսում եմ վանեցի ոսկերիչների արհեստանոցի մասին, որն այժմ գտնվում է գլխավոր փողոցում: Փախստական ոսկերիչների կազմակերպության գաղափարը պատկանում է պ. Մալխասին, որը պ. պ. Ամիրովի և Ս. Թառայանի օգնությամբ կարողացավ 24 վարպետների համար բավականին տանելի արհեստանոց հարմարեցնել, նյութեր ձեռք բերել և աշխատանք ապահովել:

Մինչ այդ ոսկերիչները պատվերով էին աշխատում՝ տրված օրինակներով, այդ պատճառով նրանց սարքած աշխատանքների վրա կարելի է տեսնել ամենատարբեր բնույթի զարդանախշեր, ինչպես օրինակ հունական, ընդհանուր կովկասյան, երբեմն՝ հայկական և այլն:

Այժմ հավաքվել են բազմաթիվ իրեր՝ սկահակներ (վազեր), շրջանակներ, ունելիներ, մատանիներ, գրիչներ, ծխախոտատուփեր, կանացի ձեռքի պայուսակներ, լուցկու տուփի պատյաններ, ապարանջաններ, գոտիներ, բաժակակալներ, օղակներ և այլ առարկաներ, որոնք ապշեցնում են աշխատանքի նրբագեղությամբ: Օգոստոսի մեկից արհեստանոցը պատկանում է Բրատսկայա պոմոշչի («Եղբայրական օգնության» – Ա. Ի.) երևանյան բաժանմունքին:

Արհեստանոցի վարիչ պ. Մալխասը փորձում է այլ հիմունքներով կազմակերպել գործը: Նկատի ունենալով, որ վարպետներն այժմ արդեն նյութապես ապահովված են, և կախված չեն օրական աշխատանքից, պ. Մալխասը հայկական մանրանկարչության լավագույն գիտակ, ծայրագույն վարդապետ Գարեգինի օգնությամբ ուսումնասիրում է հայկական զարդանախշերը և տրված նկարներով, վարպետները առարկաներ են պատրաստում առավելապես հայկական ոճով:

Այդպիսով՝ դիմանկարներով և այնպիսի անճաշակ ու տհաճ ծխախոտատուփերի փոխարեն, ինչպիսիք են «Հայաստանի ոգին», «Վարդանի արյունալից կռիվը» և այլն, մենք կունենանք ավելի բարձրաճաշակ, նրբարվեստ և ամեն դեպքում նոր աշխատանքներ:

Լավ կլինի, եթե վարպետներին հնարավորություն տրվի իրերը պատրաստել իրենց ստեղծած օրինակներով՝ այնպես, ինչպես աշխատել են Վանում: Իրերի այս ամբողջ տեսականին այժմ վաճառքի չի հանվում:

Մոտ ապագայում Խորեն սարկավագը պատրաստվում է Վանի ոսկերիչների հավաքած աշխատանքների շրջիկ ցուցահանդես կազմակերպել Մոսկվայում,

Պետրոգրադում, Ռոստովում, Բաքվում և Թիֆլիսում: Յուրովի պրոպագանդա է սա, դրա համար հետաքրքրական կլինի տեսնել բնօրինակ այն աշխատանքները, որոնցով այնքան հռչակված էին Վանի ոսկերիչները» (Π. M. 1916, N 31, 11–12):

Վասպուրականցի հայերին է բնորոշում նաև «Армянский вестник»-ի 23-րդ համարում հրատարակված և «Արև» թերթից մեջբերված այն հատվածը, որտեղ վասպուրականցի հայերի տոկունության և ընդունակությունների մասին պատկերացում կազմելու համար խորհուրդ է տրվում այցելել Երևանի հայ գաղթականների արհեստանոցները. «Նրանց այցելողները թուրքահայերի մեկ այլ արժեքավոր հատկանիշ էլ են ի հայտ բերում՝ սեփական աշխատանքով ապրելու նրանց ցանկությունը, բավականանալով առանց բարեգործների օգնության»: Այստեղ ասվում է, որ բոլորից ավելի ուշագրավ են ոսկերիչների արհեստանոցները և «Վասպուրականցի կանանց միությունը», որոնց ստեղծագործությունները կարող են ազատ մրցակցել աաջավոր երկրների նմանատիպ վարպետների հետ ինչպես վայելչագեղությամբ, այնպես էլ գեղեցկությամբ: Եվ ինչպես ոսկերիչները, այնպես էլ «Վասպուրականցի կանանց միությունը», նյութական օժանդակության կարիք չունեն, նրանց միակ ցանկությունն է հասարակությանը ներկայացնել իրենց պատրաստած ստեղծագործությունները և այդ նպատակով ժամանակավոր կամ մշտական ցուցահանդեսներ կազմակերպել խոշոր քաղաքներում, որպեսզի հնարավոր լինի վաճառել մշտապես արտադրվող ապրանքը: Հոդվածում նշվում է նաև, որ «Ոսկերիչների արհեստանոցները և «Հայուհիների միությունները» մեր իրականության մեջ կարող են մշտապես գոյատևել, նրանք մեր ժողովրդի համար եկամտի նոր աղբյուր են դառնում» (Обзор печати, «Армянский вестник» 1916, N 23, 22):

1916 թ. Երևանում նոյեմբերի մեկին բացված վանեցի արծաթագործների ցուցահանդեսի և հետագայում տարբեր քաղաքներում այն ներկայացնելու մասին իմանում ենք Պ. Մակինցյանի հեռագրից. «Կիրակի օրը կայացավ վանեցի ոսկերիչների գործերի միօրեայ ցուցահանդէսը: Այցելուների թիւը հասաւ չորս հազարի: Արծաթէ իրերն իրանց նրբութեամբ ահագին տպաւորութիւն թողին: Մի շաբաթից յետոյ ցուցահանդէսը կը կազմակերպվի Թիֆլիսում, այնուհետև Բագում, Ռօստովում, Մօսկւայում և Պետրօգրադում: Մակինցեան» (Մակինցեան 1916, N 246, 2):

Երևանում ամենահայտնի արծաթագործներից էր Վահան Հացագործյանը: Ինչպես վարպետներից շատերը, որոնց կանդրադառնանք կրկին, այնպես էլ Վ. Հացագործյանն իր երկու եղբայրների՝ Գաբրիելի և Արսենի հետ 1915 թ. Վանի հայերի ինքնապաշտպանության ակտիվ կազմակերպիչներից էր: Նրանց ջանքերով այդ ժամանակ կազմակերպվել է դատարան, կազմվել սուրհանդակների խումբ և ձուլվել են թնդանոթներ: Հացագործյանի ընտանիքը Վանից 1916 թ. գաղթել էր և հաստատվել Երևանում (Սահյան 2009, 133):

Վահան Հացագործյանը (1880–1967) Վանում հայտնի վարպետ Գրիգոր Շալջյանի աշակերտն էր եղել: Երևանում Վ. Հացագործյանը «Վան» արծաթագործական միավորման հիմնադիրներից էր, աշխատում էր առավելապես մանրարուրքի տեխնիկայով, պատրաստում էր զարդեր և բազմապիսի այլ աշխատանքներ: Հացագործյանին բնորոշ եղանակներից մեկն էլ ձողի վրա պարուրաձև

փաթաթած, այնուհետև սեղմած արծաթաթելով համաչափ օղակների շարքի տեսքով նախշեր ստանալն էր: Վահան Հացագործյանի աշխատանքները պահվում են Ս. Պետերբուրգի Ռուսական ազգագրության թանգարանում, Մոսկվայի Արևելքի ժողովուրդների և Հեղափոխության պետական թանգարաններում, Հայաստանի պատմության թանգարանում, Հ. Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստի թանգարանում, մասնավոր հավաքածուներում (Սոլախյան 1980, 325): Նրա որդին է ջութակահար և նույնպես արծաթագործ Գաբրիել Հացագործյանը:

Օ. Մանուկ-Խալոյանն իր հուշերը սկսում է նրանից, թե ինչ ջերմությամբ են Թավրիզի հայերն ընդունել վանեցի փախստականներին և թե տարագիր ու գաղթական ժողովրդի մեջ ինչ շատ էին, ինչպես ինքն է ասում. «կրթված մասնագետներն ու բարձր մտավորականները և թե ինչ կարևոր դեր էր խաղում Սրբազան հայր Մելիք-Թանգյանը» (Ներսես Մելիք-Թանգյան):

Թավրիզում հաստատված վանեցի ոսկերիչները հայտնի էին, հիմնականում, «Վան» և «Իրան» արհեստանոցների շնորհիվ, որտեղ մեծամասամբ արծաթե իրեր էին պատրաստում: Սակայն, կային նաև անկախ աշխատող անհատներ: Բուն առարկան սարքողը «ոսկերիչ» էր կոչվում, նախշազարդողը՝ «փորագրիչ» կամ «քանդակող»: Արհեստանոցը գլխավոր վարպետն էր ղեկավարում, որն ամենայն խստությամբ հետևում էր արտադրանքի որակին: Աշխատողները վարձատրվում էին ըստ իրենց ընդունակությունների, ընդհանուր առմամբ՝ բավարար չափով: Խիստ կարգուկանոնը պարտադիր էր: Ծխելն արգելվում էր նույնիսկ դրսում: Հատկանշական է, որ արհեստանոցի աշխատակիցները միասին էին նշում հայկական տոները՝ հատկապես սբ. Ծննդյան և Զատկի կապակցությամբ այցելում էին գլխավոր վարպետին: Նա սիրով հյուրընկալում էր բոլորին, առատ ուտեստներով և խմիչքներով հյուրասիրում, ու թեև այդ օրերին խանութները (արհեստանոցները) փակ էին, նրանց աշխատավարձը վճարվում էր (Մանուկ-Խալոյան 1988, II, 1- 2) Վանեցի վարպետները, երբ հավաքվում էին որևէ տոնակատարության կամ հարսանիքի առիթով, շատ գեղեցիկ երգեր էին երգում՝ ազգային, կրոնական և հեղափոխական: Երբեմն որևէ մեկն արտասանում էր իր իսկ հեղինակած բանաստեղծությունները (Մանուկ-Խալոյան 1988, I, 1):

«Վան» ոսկերչանոցը Թավրիզում հիմնադրել են Կարապետ աղա Բեգլարյանը և Փանոս աղա Ժամհարյանը 1921 թ.: Ժամհարյանը ծնվել էր 1882 թ. Վանում, 1915 թ. ցեղասպանությունից փախել էր Երևան, այնուհետև՝1920 թ. տեղափոխվել Թավրիզ[3]:

Կարապետ Բեգլարյանը ծնվել է 1871 թ. Վանում: Այնտեղ նրանց ազգանունը եղել է Բեյլարյան, հետագայում դարձել է Բեգլարյան: 1915 թ. նա վիրավորվել է Իգդիրում և բուժվել է Թիֆլիսում: Նրա երկու որդիները ծնվել են Վանում. Աղավարդը՝ 1902 թ. և Գուրգենը՝ 1905 թ., դուստրը՝ Անուշը ծնվել է Իգդիրում: 1920 թ. ընտանիքը տեղափոխվել է Թավրիզ, իսկ 1946 թ.՝ Երևան: Սակայն ինքը՝ Կարապետ Բեգլարյանը չէր կարող գալ Խորհրդային Միություն, որովհետև դաշնակցական էր: Այն-

3 Հաղորդել է անձամբ Վարդան Դերձակյանը 2000 թ. Երևանում: Երախտագիտությամբ պետք է նշել, որ նա ոչ միայն ստույգ տեղեկություններ է հայտնել ոսկերիչ վարպետների մասին, այլև ոսկերչական գործիքներ է նվիրել Հայաստանի պատմության թանգարանին:

տեղ էր մնացել նաև որդին՝ Գուրգենը: Երբ Իրանի շահը պետք է գար Թավրիզ, Փանոս Ժամհարյանը և Կարապետ Բեգլարյանը արծաթից մի տուփ էին սարքել, որի կափարիչի վրա փորագրել էին Պարսկաստանի քարտեզը, մեծ քաղաքների տեղերում ադամանդներ էին դրել, իսկ մյուս քաղաքների տեղերում՝ այլ ակներ և նվիրել էին շահին: Կարապետ Բեգլարյանը 1949 թ. մահացել է Թավրիզում[4]:

Ռեզա-շահ Փահլավիի[5] թագադրության կապակցությամբ պատրաստված թագը նույնպես հայ վարպետներն էին սարքել: Ինչպես գրում է Օ. Մանուկ Խալոյանը. «Երբ Ռեզա –շահ Փահլավին դարձավ Իրանի թագավոր (շահ – Ա. Ի.), Թավրիզի հայ ոսկերիչների համայնքին պատվիրեցին մի թանկարժեք թագ պատրաստել նրա համար: Թագի պատրաստմանը մասնակցում էին ոսկերիչ և ակնեղենի մասնագետ Պատմագրյանը, Մակուեցի եղբայրները (Վահան, Գևորգ, Արմենակ Զարգարյանները), Դավիթ Փափազյանը, Կարապետ Բեգլարյանը, Փանոս Ժամհարյանը... Ծիսակատարության գլխավոր արարողություններից մեկն այն էր, որ Մելիք Թանգյանը թագն օրհնելուց և օծելուց հետո, այն դրեց թագավորի գլխին: Դա շատ մեծ պատիվ էր Իրանի հայության համար: Ոչ մի ուրիշ փոքրամաս ազգ նման պատիվ չի ունեցել... » (Մանուկ-Խալոյան II, 1):

«Վանի» քանդակագործ (այսինքն՝ փորագրիչ) վարպետներից ամենանշանավորներն էին Մանուկ աղան և Գուրգեն Բեգլարյանը՝ Կարապետ Բեգլարյանի որդին: Նրանք արհեստանոց ընդունեցին նաև ամերիկյան որբանոցից եկած Արամայիսին և Դանիելին, որպեսզի նրանք օտարության մեջ անպաշտպան չմնային: «Վանում» էր աշխատում նաև Վարդան Աղազարյանը, որը հետագայում առանձին արհեստանոց հիմնեց:

Քանդակագործությունը (փորագրությունը) բաժանվում էր երեք տեսակի՝ 1. հայկական քանդակներ, 2. «թել-ղալամ»՝ թելի նման բարակ գծով ծաղիկներ ու զանազան այլ նախշեր, 3. բնության տեսարանների, վանքերի, մարդկանց (նշանավոր), կենդանիների և այլ պատկերներ (Մանուկ-Խալոյան I, 3: Մինասեան 1983, 38–39):

«Իրան» ոսկերչանոցը 1924 թ. հիմնել են Գալուստ Դերձակյանը, Հմայակ և Միհրան Այվազյանները և Մինաս (Ջոջ աղա) Ամիրյանը, որոնք բոլորն էլ 1915 թ. Վանից նախ Երևան էին գաղթել, ապա 1924 թ.՝ Թավրիզ: Գալուստ Դերձակյանը ծնվել է 1884 թ. Վանի Այգեստան թաղամասում (մահացել է 1974 թ. Իրանում): Նա կարճ ժամանակ է աշխատել Վան քաղաքում: 1915 թ. ընտանիքը, ինչպես նշվեց, գաղթել է Երևան: Գալուստ Դերձակյանի որդին՝ Վահանը, ծնվել է 1922 թ. Երևանում: Վարդան Դերձակյանը, Գալուստ Դերձակյանի մյուս որդին, ծնվել է 1926 թ. Թավրիզում: Նրանք 1944 թ. տեղափոխվել են Թեհրան: Սահակ Դերձակյանը՝ Գալուստի եղբայրը, Երևանից գնացել է Թիֆլիս և այնտեղ է աշխատել: Վահան Դերձակյանի բազմաթիվ աշխատանքներից հայտնի են հատկապես վեց և չորս ձիերով գոհարազարդ կառքերը՝ բոլոր մանրամասնություններով: Վեց ձիերով

4 Այս տեղեկությունները հաղորդել է Կարապետ Բեգլարյանի դուստրը՝ Անուշ Բեգլարյանը Երևանում 1992 թ.:

5 Ռեզա-Շահ Փահլավի (1878–1944), Իրանի շահ՝ 1925–1941, Փահլավիների դինաստիայի հիմնադիրը:

կառքը գտնվում է ԱՄՆ-ում: Նրա աշխատանքներից է նաև թանկագին ակներով թագը, որը նա սարքել էր թագավորի պահակազորի պատվերով՝ թագաժառանգի համար[6]: «Իրան» ոսկերչանոցի հիմնադիրներից Հմայակ Այվազյանի տղան է Գուրգենը՝ ծնված 1922 թ.: Նա հոր մասնագիտությունը շարունակել է «Իրան դուստ» արհեստանոցում՝ ղեկավարելով բոլոր աշխատանքները (արծաթ հալեցնելու, սևադ պատրաստելու և այլն)[7]:

«Իրանի» գլխավոր վարպետն էր Գարեգին Քանքանյանը: Նրա ստեղծած բուսանախշերի ոճը տարբերվում էր «Վանի» նախշերից: Նա, առհասարակ, ծաղիկներով հորինվածքներ ստեղծելու ու տարածության մեջ (այսինքն՝ մակերեսին) դրանք ճաշակով տեղադրելու բացառիկ շնորհք ուներ: Ծաղիկները երբեմն իրենց ստվերներով էր պատկերում: Գարեգին Քանքանյանին հետագայում ընդօրինակում էին մյուս արծաթագործները: Գարեգին Քանքանյանը ծնվել էր Վանում, նա 1946 թ. եկել էր Երևան և մնացել այստեղ:

«Իրանում» էր աշխատում նաև Սուրեն Աղազադյանը: Նա երկու անգամ միաժամանակ աշխատել էր ԱՄՆ-ում, հետո՝ կրկին վերադարձել Իրան: Այս ոսկերչանոցի լավագույն փորագրիչներից էր վարպետ Եղիշեն՝ Եղիշե Խաչատրյանը: Նա հայկական քանդակների (երկրաչափական բարդ, հաճախ իրար մեջ հյուսված նախշերի) անզուգական վարպետ էր և որ ամենաբարդն է՝ տարածության ճիշտ հաշվարկի ու տեղադրման փայլուն մասնագետ: Նա փորագրում էր նաև տարբեր տեսարաններ, վանքեր, եկեղեցիներ: Նա հոգևորական էր՝ սարկավագ: Երգում էր հոգևոր, ինչպես նաև ռազմական և հայրենասիրական երգեր: Եղիշե Խաչատրյանը մասնակցել էր Վանի ինքնապաշտպանությանն ու Սարդարապատի հերոսամարտին: Ի դեպ, վանեցի վարպետների մեծ մասն էր մասնակցել հայրենի քաղաքի ինքնապաշտպանությանը. շատերը զենք էին պատրաստել և զենք նորոգել այդ շրջանում: Բոլորն ունեին ընդհանուր նպատակ՝ վերադառնալ Վան և ապրել հայրենի հողի վրա:

Աչքի ընկնող ոսկերիչներից էր նաև Ալեքսան Օրբելյանը, որը հետագայում Հայաստան տեղափոխվեց և երկար տարիներ Երևանի ոսկերչանոցում աշխատելուց հետո դարձավ քարի վրա փորագրող գերազանց վարպետ (Մանուկ-Խալոյան I, 1988, 5–9)

Փայլուն արհեստավորներից էր Աղասի Մարգարյանը: Նա Գալուստ Դերձակյանի աշակերտն է եղել: Ինչպես նշում է Վարդան Դերձակյանը, նրա աշխատանքները սփռված են աշխարհով մեկ[8]: Նա տիրապետում էր ոսկերչական արվեստի բոլոր ճյուղերին՝ ընդհուպ մինչև ակնագործությունը: Նրա հիմնական առանձնահատկությունն այն էր, որ պատվիրատուի համար թղթի վրա անմիջապես նկարում էր պատրաստվելիք առարկան և միանգամից կարողանում էր էսքիզն այնպես նկարել, որ այն արդեն գեղարվեստական արժեք էր ստանում: Բացի այդ, նա դիմանկարների և տեսարանների անգերազանցելի փորագրիչ էր:

---

6 Հաղորդել է Վարդան Դերձակյանը:

7 Հաղորդել է Վարդան Դերձակյանը:

8 Հաղորդել է Վարդան Դերձակյանը:

Թավրիզի վանեցի ոսկերիչներից էին նաև Խոսրով և Գաբրիել Կոտիկյան եղբայրները, Ատավմ աղան և նրա որդի Վահագնը, Վահան և Վարդան Դերձակյաններն ու Գարեգին Քանքանյանը, Գարեգին Շահնազարյանը, Գանգռի Միհրանը և որդին՝ Գառնիկը, Ավետիս Խլղաթյանը, Գրիգոր Գասպարյանը (Ջոջ աղա), Հմայակ Բազիկյանը: Սրանցից ոմանք հետագայում Թավրիզից տեղափոխվել են Թեհրան, Նոր Ջուղա և այլ քաղաքներ, ինչպես Տիգրան Բերբերյանը, որ իր որդի Ցոլակի հետ փոխադրվեց Թեհրան, Հրայր Ջարգարյանը, որ տեղափոխվեց Նոր Ջուղա, 1950–1964 թթ. այնտեղ աշխատեց, այնուհետև մեկնեց ԱՄՆ: 1945–1950-ական թթ. Նոր Ջուղայի վանեցի վարպետներից էր նաև Սուրեն Ավետյանը (Մանուկ-Խալոյան I, 1988, 5–9):

Վարդան Դերձակյանը, պատմելով տարբեր վարպետների մասին, չի նշում, որ ինքը ևս փայլուն ոսկերիչ է եղել և բազմապիսի առարկաներ է պատրաստել՝ թագեր, զարդեր և այլն: Հարկավոր է նշել, որ նրա պատրաստած կենցաղային առարկաներն անգամ, բարձրարժեք արվեստի նմուշներ են (տուփեր, հայելու շրջանակներ, սկահակներ, սկուտեղներ, բաժակակալներ և այլն)[9]:

Ինքնուս հայտնի փորագրողներից էր դերասան-արվեստագետ Աղամալյանը, որի աշխատանքներն աչքի էին ընկնում իրենց նրբությամբ և հայկական ազգային գեղեցիկ ոճով:

Թավրիզում հայ արծաթագործ վարպետները նախապես պայմանավորված լինելով իրենց խանութից հավաքած հող ու փոշին տանում էին աղյուսի գործարան ու ձուլում էին, որպեսզի այդ հողի ու աղբի մեջ եղած ոսկին կամ արծաթը դուրս բերեին: Այդ գործը կոչվում էր «Կալ անել» ու քանի որ այդ գործարանները քաղաքից դուրս էին գտնվում, առիթն օգտագործելով, ընտանիքներով հանդերձ կեր ու խում կազմակերպելով, մի ամբողջ ուրախ օր էին անցկացնում դաշտում:

Օննիկ Մանուկ-Խալոյանը Թավրիզի վանեցի վարպետներից Դավիթ Փափազյանի մասին գրում է, որ նա որպես փորագրիչ, մրցակից չուներ և անպատկերացնելի է, որ մի երկաթի կտորով մարդ կարող է այդպիսի հրաշքներ ստեղծել թե՛ զարդանախշերի, թե՛ գրություններ փորագրելու տեսանկյունից: Նա տարբեր լեզուներով արտակարգ նրբությամբ և գեղեցկությամբ էր գրությունները փորագրում: Ոսկերչական արտադրանքի հարգադրոշման վարչություն չկար: Հայ վարպետների աշխատանքների հայերեն և պարսկերեն լեզուներով դրոշմները փոխարինող տառերը Դավիթ Փափազյանն էր գրում: Փորագրվում էին միայն արհեստանոցների անվանումները և դա բավարար էր, որպեսզի հավատային, որ ազնիվ աշխատանք է (Մանուկ-Խալոյան I, 1988, 7–8):

Դ. Փափազյանի մասին հարկավոր է ավելացնել, որ նա ոչ միայն տաղանդավոր ոսկերիչ էր, այլև բազմաշնորհ անձնավորություն՝ տարբեր ոլորտներում: Ինչպես նշում է Սիրաք Սարհադյանը. «1906 թիին Դաւիթ Փափազեանի նախաձեռնութեամբ և խմբագրութեամբ հրատարակւեց ... թիւրքերէն լեզւով ժելատինատիպ «Սապահ-օլ-խայր» («Բարի լոյս») թերթը, որ նոյնիսկ թիւրք զինւորականներից, որոնք հայատեաց, պետական քաղաքականութեան հակառակ էին, գնահա-

9 Այս ամենը հայտնի է Սեպուհ Խաչատրյանի ուղարկած լուսանկարների շնորհիվ:

տուեց և աշխատակցեց» (Սարհադեան 2007, 28)։ Վանի ինքնապաշտպանության օրերին Դ. Փափազյանը զինաբաշխական հանձնախմբի և զինագործարանի անդամներից էր (զինագործարանում անպետքացած բոլոր զենքերը նորոգում էին) (Սարհադեան 2007, 45)։ Վանի ազատագրումից (1915 թ. մայիս) հետո, երբ կազմվեց Վասպուրականի ինքնիշխանության ժամանակավոր կառավարությունը, «Դաւիթ Փափազեանը... այն ժամանակ ընդհանուր միլիցիապետ էր և շատ ազնիւ ու անշահախնդիր գործիչներից մէկը...» (Սարհադեան 2007, 79)։

Օ. Մանուկ-Խալոյանը «Վան» ոսկերչանոցի վարպետներից հիշատակում է նաև Հայկ Սևանցյանին, Միհրան և Արշավիր Աթաբեկյաններին, Ավետիսին, Միհրան Կոտիկյանին, որը մի շրջան Գերմանիայում էր ապրել, հետո եկել էր Թավրիզ։ Սրանք բոլորը ստեղծագործող վարպետներ էին։ Կոտիկյանը նաև տեխնիկայի իմաստով էր նորարար։ Նա փոքրիկ մամլակներ (պրեսներ) էր պատրաստել և մասամբ կրճատել ձեռքի աշխատանքի անհարմարությունը։ Նրա երկրորդ կարևոր գործը գլաններով մեքենա ստեղծելն էր, որն արծաթը թերթիկի էր վերածում և արագացնում էր աշխատանքը։ Նրա հայտնագործած մեքենան առաջինը Հայկ Սևանցյանն է պատրաստել իր՝ Կոտիկյան Միհրանի օգնությամբ։

Վանեցիներից շատերն էին իրենց զավակներին ուղարկում աշակերտելու ոսկերիչներին։ Վարպետներից ոմանք էլ իրենք էին իրենց երեխաներին ուսուցանում արհեստը։ Նոր սերնդի մեջ ևս լավ արհեստավորներ ի հայտ եկան։ Իրան տեղափոխված վանեցի ոսկերիչների երկրորդ սերունդն էին համարվում Ծերուն և Գարեգին Այվազյանները, Գառնիկը, Բենիկը, Վահագն և Վարդան Դերձակյանները, որոնք հատկապես ոսկով էին աշխատում, Փանոս և Վարդգես Ժամհարյանները, Գուրգեն Բեգլարյանը, Գարեգին և Արշավիր Քանքանյանները։ Նոր սերնդի շնորհալի փորագրիչներից էր Սուրեն Պոչովյանը։

Այս շրջանի լավագույն վարպետներից էր Արծրուն Բերբերյանը, որը հայտնի է որպես մետաղի գեղարվեստական մշակման հնարավոր բոլոր եղանակներին տիրապետող բազմաշնորհ արվեստագետ (Մանուկ-Խալոյան I, 1988, 10–11)։

Արծրունի ծնողները Վանից գաղթել էին Թիֆլիս, որտեղ և նա ծնվել էր 1925 թ., այնուհետև տեղափոխվել էին Թավրիզ։ Բերբերյանի ուսուցիչներն են եղել Ատովմ Սապոնջյանը և Փանոս Ժամհարյանը։ 1946 թ. նա մեկնել է Թեհրան և արդեն որպես վարպետ աշխատել Խոսրով Կոտիկյանի արհեստանոցում։ 1963 թ. նա եկավ հայրենիք և հաստատվեց Երևանում, որտեղ շարունակեց աշխատել և մետաղի գեղարվեստական մշակման դասեր տալ ուսումնարանում։ Նա համամիութենական և միջազգային փառատոների դափնեկիր է, պարգևատրվել է դիպլոմներով, բրոնզե (1973 թ.) և ոսկե մեդալներով (1975 թ., 1977 թ.)։ Նրա աշխատանքները ցուցադրվել են Ռաբաթում (Մարոկկո), Սեթուբալում (Պորտուգալիա), Կոպենհագենում, Հելսինկիում, Ռեյկյավիկում, Լուշանում (Չինաստան), Ժնևում, Դորթմունդում, Ռոթերդամում, Սանկտ Պետերբուրգում, Մոսկվայում և մշտապես պահվում են Երևանի, Դեթրոյթի, Սանկտ Պետերբուրգի և Մոսկվայի թանգարաններում (Գրիգորյան 1988, 5–6)։

Ատոմ աղա Սապոնջյանի աշակերտներից է եղել նաև Վահրամ Մաքնոսի Շիրինյանը։ Ճիշտ կլինի մեջբերել 2004 թ. ինձ գրած իր արժեքավոր նամակը, որը

վերնագրել է «Կենսագրական գծեր արծաթագործ Վահրամ Շիրինյանի»: Նամակի բովանդակությունը հետևյալն է. «Ծնողներս բնիկ Վասպուրականցի՝ Վան քաղաքի բնակիչներ էին: Հորս անունը Մագնոս, մորս՝ Նվարդ: Քրոջս անունն է Գոհար, կինս՝ Ալմաստ, երեխաներս՝ Գրիգոր և Վահե:

Ծնվել եմ 1920 թ. Թեոդոսիա քաղաքում (Ղրիմ)՝ Վանի 1915 թ. ինքնապաշտպանության կռիվներին մասնակցած, այնուհետ ռուսական նահանջող բանակի հովանու տակ, ջարդից փրկված ընտանիքում:

Վանի գաղթականների մի մասը Ռուսաստան-Վրաստան-Հայաստան ճանապարհով հասան Պարսկաստան և հաստատվեցին Թավրիզ քաղաքում, այդ թվում և մենք: Դրանց մեջ կային Վանի հանրահայտ արծաթագործ վարպետներ, որոնք հիմք դրեցին Վանի յուրահատուկ արծաթագործության արհեստին ու արտադրությանը Թավրիզում:

Վանի հայ գաղթականների արծաթագործության արհեստն ուներ երկու հիմնական ճյուղ: Առաջինը պատրաստողն էր արծաթյա իրի, երկրորդը փորագրողն էր արծաթյա իրի վրա[10]: Նորույթ էր իրենց «սևադ» նյութի օգտագործման հմտությունը արծաթագործության մեջ. իրենք էին պատրաստում այն՝ սև գույնի խառնուրդ էր, պատրաստում էին արճիճից, քուքուրդից[11], ավազանման շաղ էին տալիս փորագրության վրա, բոցով հալեցնում, հալված սևադը լցվում էր փորագրության ակոսների մեջ և ձուլվում արծաթին: Այնուհետև հալված սևադի երեսը մաքրելով, տակի փորագրությունը պատկերվում էր սև գույնով՝ արծաթի վրա՝ գրավիչ գեղեցկությամբ:

Արծաթյա իրերը, հիմնականում, գործածվում են ընտանիքներում. պատրաստում էին շաքարամաններ, ծաղկամաններ, բաժակակալներ, գդալներ, պատառաքաղներ, պոտնոցներ[12], ծխախոտի տուփեր և այլն, որոնց վրա, հիմնականում, փորագրում էին ծաղիկներ ու վարդերի տեսակներ՝ տերևներով ու ճյուղերով, թռչնատեսակներ, որոնք շրջափակվում էին շղթայաձև եզրային գծագրություններով: Փորագրությունների մեջ սկսեցին կիրառել հայկական ոճի չափավոր գծերի շղթայաձև գծատեսակները՝ հայկականություն մտցնելով արծաթագործության մեջ:

Իմիջիայլոց, վանեցի հայ գաղթականները Թավրիզում ստեղծել էին Հսկիչ մարմին, որը հսկում և կանխում էր որևէ հոռի երևույթ համայնքում՝ լիներ գողություն, ամուսնալուծություն, կռիվ և այլն:

1927 թ. հաստատվելով Թավրիզում, տարրական կրթությունս ստացել եմ «Հայկազյան Թամանյան» դպրոցում: 1935 թ. հայրս ինձ ուղարկեց Խորհրդային Հայաստան, ուր և ավարտեցի Մյասնիկյանի անվան միջնակարգ դպրոցը: 1937 թ. Խ. Հայաստանի օրվա կոմկուսի նախագահ Խանջյանի «ինքնասպանության» ժամանակահատվածում ինձ չհաջողվեց մնալ հայրենիքում. հարկադրված 1937 թ. հուլիսին վերադարձա Պարսկաստան, Թավրիզ: Բարձրագույն կրթություն ստա-

10 Օ. Մանուկ-Խալոյանը ևս նշում է, որ առարկան սարքողը ոսկերիչն է, նախշազարդողը՝ փորագրիչը կամ քանդակողը:

11 Ծծումբ

12 Մատուցարան

նալու հնարավորությունից զրկված, արհեստավարժ արծաթագործ դառնալու որոշումով աշակերտեցի գաղթած վանեցի վարպետներից Ատոմ Սապոնջյանին: Այդ օրերի արհեստ սովորեցնող վարպետներն այն սովորեցնում էին տարիների տևողությամբ: Վարպետի՝ հորս հետ համակուսակցական լինելու հանգամանքը նպաստեց արծաթագործությունը սովորել ավելի կարճ միջոցում: Թավրիզում հորս օգնությամբ ստեղծեցի իմ սեփական արհեստանոցը, ունեի աշխատողներ, պատրաստում էի վերևում նշված արծաթատեսակներ, որոնք վաճառվում էին մայրաքաղաք Թեհրանում:

1945 թ. փոխադրվեցի Թեհրան, ամուսնացա, ընտանիք կազմեցի: Սկզբում զբաղվեցի արծաթագործությամբ. Վանի ոճի արծաթեղենը սկսել էր իր տեղը զիջել Սպահանի (պարսկական) ոճով պատրաստվող արծաթեղենի, որը միանգամայն թողեցի և զբաղվեցի ոսկերչությամբ, հետո ստեղծեցի իմ վաճառատունը, ավելացրեցի ադամանդագործությունն ու այսպես մինչև 1980 թ.: Իրանի Իսլամական հեղաշրջումից հետո ընտանիքով հաստատվեցի Հ. Ամերիկա, ուր և ապրում եմ այժմ»[13]:

1932 թ. Թավրիզում էր ծնվել Լեմվել Ավետյան-Արծրունին: Նա Հովսեփ Պոչովյանի կրտսեր որդին էր, որը Վանի Արծրունյաց թագավորության ժառանգորդներից Աղա Հովհաննէս Արծրունու ծոռն էր:

Նրանց ընտանիքը Վանից 1915 թ. տեղափոխվել էր Ռուսաստանի Դոնի Ռոստով քաղաքը, իսկ 1929–1930 թթ.՝ Թավրիզ, հետո՝ Թեհրան: Իրերի բերումով փոխել էին ազգանունը, դարձել էին Ավետյան: Նա սկզբում աշխատանքի է ընդունվել ժամագործի մոտ, այնուհետև զբաղվել է ոսկերչությամբ: Երբ նյութական պայմանները բարելավվել են, նա ուղևորվել է ԱՄՆ և ուսանել GIA (Gemological Institute of America)՝ Ամերիկայի գոհարագիտության (գեմոլոգիական) ինստիտուտում և կատարելագործել իր մասնագիտական հմտությունները:

Լեմվել Ավետյան-Արծրունին առավել բարձր գնահատվեց Իրանում, երբ դարձավ պալատական ոսկյա իրեր և նվերներ ձևավորող և պատրաստող: Նա ընտրվել է Իրանի Ազգային Գոհարեղենի թանգարանի ավագ փորձագետ խորհրդատու:

1976 թ. Ավետյան-Արծրունին պատրաստել է թագավորի եղբոր կնոջ թագը, որն այժմ ցուցադրվում է Կենտրոնական բանկի Գոհարեղենի թանգարանում:

Լեմվել Ավետյան-Արծրունու արհեստավարժ ձեռքերով են պատրաստվել բազմաթիվ ոսկյա արձաններ և աշխարհահռչակ իրեր, որոնցից են Սուրբ Մարիամ Աստվածածնի արձանը, Ալբանիայի թագուհու թագը, Թագավորութեան 2500 ամեակի առիթով՝ Պերսպոլիսի պատկերով, նախշերով ու գոհարներով պատրաստված ոսկյա վազերը, Վարդան Մամիկոնյանի, Տիգրան Մեծի, Ջորավար Անդրանիկի ոսկյա կիսանդրիները և շատ ու շատ այլ իրեր:

Իրանի հեղափոխությունից հետո նա պետական մարմինների կողմից վայելեց միևնույն հարգանքը և Իրան-իրաքյան պատերազմի տարիներին (1980–1988 թթ.), երբ անվտանգության նպատակով անհրաժեշտ էր երկրի ազգային թանկար-

13 Բացի նամակից, Վահրամ Շիրինյանը 2003 թ. Երևանում նաև բանավոր տեղեկություններ է ինձ հաղորդել: Նա 2019 թ. մահացել է ԱՄՆ Գլենդել քաղաքում:

ժեք գոհարեղենը հավաքել և պահել ապահով վայրում, Լ. Ավետյան-Արծրունուն խնդրել էին, որպեսզի աջակցի այդ աշխատանքին և հետո՝ կրկին վերադասավորի: Նա ինն ամիս հատկացրեց Պետական գոհարեղենի թանգարանը նույնությամբ վերականգնելու համար:

Լ. Ավետյան-Արծրունին, սկսած 1993 թվականից, 16 տարի շարունակ գոհարագիտության բազմաթիվ անվճար դասընթացներ է անցկացրել մասնագետների և ուղղակի հետաքրքրվողների համար:

Իրանի հեղափոխությունից հետո Լ. Ավետյան-Արծրունին նվիրվեց նաև ազգային բարեգործական աշխատանքին: Նա ազդվել էր որ ժամանակին Թեհրանում հիմնված «Խրիմեան Հայրիկ» միությունը դադարել էր գոյատևել և մի խումբ վանեցիների իր շուրջն հավաքելով, 1996 թ. հիմնեց Վան Վասպուրական Պատմական Հարցէրի Կենտրոնը, կարգախոս ունենալով՝ «**ամեն մի հայ պիտի կառչած մնայ իր արմատներին**»: Նրա նպատակն էր կազմակերպել հանդիպումներ, ցուցահանդեսներ, կատարել ուսումնասիրություններ, հրատարակություններ և հատկապես Արևմտյան Հայաստան ուխտագնացության միջոցով մարդկանց իրազեկել անցյալի մասին և արթնացնել պապենական արմատներին կառչելու առողջ գիտակցությունը, ինչպես նաև Հայ դատի համազգային պահանջատիրության քարոզարշավ կազմակերպել տեղական և միջազգային ատյաններում, իրավատիրական հարցեր բարձրացնել Վասպուրականի և Արևմտյան Հայաստանի բռնագրավված այլ շրջանների հայկական պատկանելությունն ապացուցելու ուղղությամբ:

Լ. Ավետյան-Արծրունին կյանքից հեռացավ 2012 թ. փետրվարի 26-ին Թեհրանում[14]:

Երևանում ծնված վանեցի արծաթագործներից է եղել Երեմ Արամյանը (1934–2001): Նրա հայրը Շատախից էր (Վանի նահանգ, Վանի գավառ), մայրը՝ Վան քաղաքից: Ընտանիքը Երևան էր գաղթել 1915 թ.: Արամյանի ուսուցիչը կին էր՝ Արուսը, որն աշխատում էր ոսկերչական արտելում: Ինքը՝ Երեմ Արամյանը ողջ կյանքի ընթացքում աշխատել է հուշանվերների «Ուրարտու» գործարանում: Այնտեղ նա դարձել էր արտադրամասի պետ: Արամյանը աչքի է ընկել հատկապես նուրբ ցանցկեն եղանակով (ֆիլիգրան) կատարած բարձրարժեք գեղարվեստական գործերով: Նա ոչ թե կատարող է եղել, այլ մշտապես նորանոր նմուշներ ստեղծող, որոնց հիման վրա արտադրվել են ոսկերչական տարբեր առարկաներ, այդ թվում և զարդեր:

1972 թ. Արամյանին ժամանակավորապես հրավիրել են Հնդկաստան, որտեղ նա արծաթագործություն է ուսուցանել:

Երեմ Արամյանը մասնակցել է բազմաթիվ ցուցահանդեսների: Նա արժանացել է «Ժողովրդական վարպետի» պատվավոր կոչման: Այժմ Ե. Արամյանի աշխատանքներից շատերը պահպանվում են Երևանի Հովհաննես Շարամբեյանի անվան Ժողովրդական արվեստի թանգարանում:

---

14 Խորին երախտագիտությունս եմ հայտնում Նայիրի Բալայանցին այս տեղեկությունները հաղորդելու (21.1.2023 թ.) և Սեպուհ Խաչատրյանին՝ մեզ ծանոթացնելու համար:

Վանեցի ժամանակակից աչքի ընկնող արծաթագործ վարպետներից է Ե. Արամյանի եղբոր որդին՝ Արամ Արամյանը: Նա ծնվել է Երևանում 1964 թ.: Դպրոցն ավարտելուց հետո նա ուսանել է Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետում: Բացի այդ, արծաթագործություն է սովորել՝ աշակերտելով իր հորեղբորը և 1978 թվականից աշխատել է հուշանվերների «Ուրարտու» գործարանում: Այնտեղ մինչև 1981 թ. նա ոսկերչության դասեր է ստացել նաև Արամայիս Հակոբյանից, որի հետ շարունակել է բարեկամական ջերմ հարաբերությունները մինչև Հակոբյանի կյանքի վերջը: Ա. Արամյանի սիրելի մետաղն է արծաթը, որը և իր աշխատանքների հիմնական նյութն է: Ըստ որում աշխատում է արծաթագործական բոլոր եղանակներով[15]: Նա 2000 թ. ստացել է «Գունավոր մետաղների և թանկարժեք քարերի գեղարվեստական մշակման ժողովրդական վարպետի» կոչում:

Ռուս արվեստաբան, գրականագետ, գրող, նկարիչ Մ. Բաբենչիկովը «Անդրկովկասի ժողովրդական դեկորատիվ արվեստը» աշխատության մեջ գրել է, որ Հայաստանի սահմաններից շատ հեռու է տարածվել ոսկուց, արծաթից ու պղնձից գեղարվեստական առարկաներ պատրաստող վանեցի ոսկերիչների համբավը: Նրանց աշխատանքների՝ արծաթե ու ոսկե մատուցարանների, գոտիների, ապարանջանների, մատանիների, մեդալիոնների, մոմակալների, սափորների նրբությունն ու ինքնատիպությունը վաղուց ի վեր մեծ հետաքրքրություն են առաջացրել և հիացրել բազմաթիվ ճանապարհորդների, որոնք նպաստել են այդ ապրանքների լայնորեն արտահանմանը (Бабенчиков 1948, 71–72):

Արժե վանեցի վարպետների մասին այս հոդվածն ավարտել ֆրանսիացի գիտնական, հայագետ Ֆրեդերիկ Մակլերի խոսքի՝ Ա. Դումիկյանի մեջբերումով՝ «Ոսկերչությունը և փորագրությունը դեռևս անտիկ ժամանակներից շատ հարգի էին հայերի մոտ: Հատկապես Վանի ոսկերիչները հայտնի էին իրենց վարպետությամբ: Դարեր անց, երբ համեմատաբար մեծ թվով հայ ոսկերիչներ հաստատվեցին Փարիզում, այն դարձավ «Վանյան փորագրության» մի իսկական կենտրոն» (Դումիկյան 2012, 169):

Այսպիսով, Վանեցի վարպետները բոլոր ժամանակներում են փայլել ոսկերչական (և ոչ միայն) տաղանդով և ամենուրեք պահպանել, ուսուցանել ու տարածել են իրենց հմտությունները և առաջին հերթին հանրահայտ են նրանց ստեղծագործությունները և ոչ թե իրենք՝ վարպետներն անձամբ: Դժբախտաբար, վանեցի վարպետների մասին տեղեկությունները թերի են: Այստեղ պարզապես հրատարակվում են այն նյութերը, որոնք հաջողվել է, հնարավորությունների սահմաններում, գտնել ու պահպանել՝ հուսալով, որ երբևէ դրանք կլրացվեն:

15 Տեղեկությունները հաղորդել է Արամ Արամյանը 2000 թ.:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկզբնաղբյուրներ

ԱՏՐՊԵՏ, ՀՊԹ, արխիվ, N 146 ա, 65 – Ատրպետ, Ինչ ժառանգեցինք, ՀՊԹ արխիվ, N 146 ա, էջ 65:

Գ. Լ. 1900 – Գ. Լ., Արհեստական բնածին հանճարներ Հայոց մէջ, «Բիւզանդիոն» Կ. Պոլիս, թիւ 1100, Մայիս 22–4 յունիս, էջ 1:

ԽԱՆՋՅԱՆ ՀՊԹ, ԱՐԽԻՎ, N 100–104, ՄԱՍ II – Խանջյան Վահան, Վանի կյանք և կենցաղ 1884–1915 թթ. (ՀՊԹ, արխիվ, N 100–104, մաս II):

ԾԵՐՈՒԿ 1904 – Ծերուկ, Վանի նահանգը ներկայումս, «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1904, N 8, Օգոստոս, էջ 14–38:

ՄԱԿԻՆՑԵԱՆ 1916 – Մակինցեան Պ., Ոսկերիչների ցուցահանդէս (հեռագրով), «Մշակ» թերթ, Թիֆլիս, 1916, 3 նոյեմբերի, N 246, էջ 2:

ՄԱՆՈՒԿ-ԽԱԼՈՅԱՆ I, 1988 – Մանուկ-Խալոյան Օ., Թավրիզ քաղաքի վանեցի ոսկերիչների և վանեցի համայնքի մասին, I, 1988 (Անձնական արխիվ):

ՄԱՆՈՒԿ-ԽԱԼՈՅԱՆ II, 1988 – Մանուկ-Խալոյան Օ., Տպավորություններ Պարսկաստանի իմ հուշերից, Թավրիզ, II, 1988 (Անձնական արխիվ):

ՇԻՐԻՆՅԱՆ 2004 – Շիրինյան Վահրամ, Նամակ, 2004 (Անձնական արխիվ):

ՏԵՐ-ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ ՀՊԹ, ԱՐԽԻՎ, N 141 – Տեր-Արիստակեսյան Հակոբ, Ոսկերչությունը Հայաստանում (ՀՊԹ, արխիվ, N 141):

ОБЗОР ПЕЧАТИ – Обзор печати. 1916 Армянская пресса, Мастерские беженцев армян, журнал «Армянский вестник», Москва, 1916, N 23, с. 22.

П. М. 1916 – П. М., Ванские ювелиры в Эривани, журнал «Армянский вестник», Москва, N 31, сс. 11–12.

Գրականություն

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1956 – Աբրահամյան Վ., Արհեստները Հայաստանում IV–XVIII դդ., Երևան, 1956:

ԲԱԶԷԵԱՆ 2020 – Բազէեան Կ., Արհեստներն ու տնայնագործութիւնը Վասպուրականում, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 2020, թիւ 1–12, էջ 385–410:

ԳՐԻԳՈՐՅԱՆ 1988 – Գրիգորյան Պ., Արծրուն Բերբերյան, Երևան, 1988:

ԴՈՒՄԻԿՅԱՆ 2012 – Դումիկյան Ա., Մետաքսի ճանապարհի առևտրում հայերի գործունեության արժևորումը XIII–XIX դդ. ֆրանսիացի ճանապարհորդների հուշագրություններում, «Հայաստանի քաղաքակրթական ավանդը մետաքսի ճանապարհի պատմության մեջ» միջազգային գիտաժողովի նյութեր. 2011 թ. նոյեմբերի 21–23, Երևան, 2012, Պատմության ինստիտուտ, էջ 167–174:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ 2003 – Հայկական համառոտ հանրագիտարան, Հատոր 4, Երևան, 2003:

ԹՕՔԱԹ 2005 – Թոքաթ Յովսէփ, Հայ արծաթագործ վարպետներ, Լոս Անջելես, 2005:

ԽԱՉԻԿՅԱՆ 1999 – Խաչիկյան Լ., Արհեստագործութեան վիճակն ու զարգացման աստիճանը Հայաստանում X–XIV դարերում, Աշխատութիւններ, հատոր Բ, Խմբագիր Պարոյր Մուրադեան, Հայագիտական մատենադարան, Գանձասար աստուածաբանական կենտրոն, Երևան, 1999, էջ 296–335:

ՀԱԿՈԲՅԱՆ, ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, ԲԱՐՍԵՂՅԱՆ ՀԱՏՈՐ 2, 1988 – Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ. Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Հատոր 2, Երևան, 1988:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ 2003 – Հայկական համառոտ հանրագիտարան, Հատոր 4, Երևան, 2003:

ՄԱԼԽԱՍԵԱՆՑ ՀԱՏՈՐ 3, 1944 – Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Հատոր 3, Երևան, 1944:

ՄԵԼԻՔ ԹԱՆԳՅԱՆ – Գերաշնորհ Տեր Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան (ծնվ. Բոնակոթ, Սյուիք 1866, մահ.-1948 Թավրիզ, Իրան) https://hy.wikipedia.org/wiki (12. 01. 2023):

ՄԻՆԱՍԵԱՆ 1983 – Մինասեան Լ., Ոսկերչությունը Նոր Ջուղայում, Ն. Ջուղա, 1983:

ՄԿՐՏՉՅԱՆ, ՄԱՆՈՒԿՅԱՆ 1997 – Մկրտչյան Ի., Մանուկյան Ս., Կատալոգ Մայր աթոռ Սբ. Էջմիածնի հավաքածուից, Հայ եկեղեցու գանձեր, Մոսկվա, 1997:

ՍԱՀՅԱՆ 2009 – Սահյան Գ., Հացագործյաններ, Երևանի նշանավոր ընտանիքները, Երևան քաղաքի պատմության թանգարան, մաս 1, Երևան, 2009, էջ 132–140:

ՍԱՐՀԱԴԵԱՆ 2007 – Սարհադեան Ս., Կեանքիս յուշերից, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպություն ՀՃՈՒԿ (RAA) գիտական ուսումնասիրություններ, գիրք Ժ, Երևան, 2007:

ՍՈԼԱԽՅԱՆ ՀԱՏՈՐ 6, 1980 – Սոլախյան Լ., Հացագործյան, Հայկական սովետական հանրագիտարան, Հատոր 6, Երևան, 1980:

ՍՏԵՓԱՆՅԱՆ 2011 – Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2011:

ՎԱՐԴԱՆՅԱՆ 1989 – Վարդանյան Վ., Արհեստագործության զարգացումը Վասպուրականում, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1989, N 3, էջ 37–47:

ՏԷՎԿԱՆՑ 1911 – Տէվկանց Հայկ Տ.-Ս., Ոսկերչութիւնը գեղեցիկ արուեստ, նամակ Վանից, Գեղարուեստ, IV, Թիֆլիս, 1911, էջ 156–160:

ՏԷՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ 1963 – Տեր-Ղևոնդյան Հ., ԺԶ–ԺԸ դարերի Վասպուրականի արծաթագործության մասին, Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան, 1963, N 8, էջ 101–108:

БАБЕНЧИКОВ 1948 – Бабенчиков М. В., Народное декоративное искусство Закавказья и его мастера, Москва, 1948.

ПИОТРОВСКИЙ 1959 – Пиотровский Б. Б., Ванское царство (Урарту), Издательство Восточной литературы, Москва, 1959,

GHIRSHMAN 1964 – Ghirshman Roman, Iran Protoiranier, Meder, Achämeniden, München, 1964,

Астхик Исраелян
Музей истории Армении
astghikisraelian@gmail.com

ВАСПУРАКАНСКИЕ ЮВЕЛИРЫ (19–20 вв.)

Ключевые слова: ювелир, мастерская, светский, священник, ученик, правила, современные мастера.

Ювелирное искусство Васпуракана несет в себе традиции общеармянского искусства и непосредственно продолжает культуру Ванского или Араратского царства, которое в свою очередь являлось продолжением богатого искусства бронзового века. Археологические материалы и письменные источники (клинописные) свидетельствуют о развитии и разнообразии ювелирного искусства в Армянском нагорье с древнейших времен. А места их обнаружения (в храмах, дворцах, крепостях, погребениях) указывают на их функции.

Исторические источники дают ценные сведения о средневековых ювелирных изделиях. О них свидетельствуют также церковная утварь и серебряные обложки священных книг.

В Ване ювелирным делом занимались как светские мастера, так и духовенство при монастырях.

В 19–20 вв. изделия ванских мастеров распространялись в Турции и далеко за ее пределами – экспортировались в Европу, Африку и Америку. Ювелиры применяли различные техники, такие как литье, чеканка, резьба, филигрань, скань, гравировка, зернь, золочение, чернь и пр. Хотя чернь была известна с очень давних времен, в Ване, она стала широко применяться с 1860–1870 -х годов, затем перешла на Кавказ и оттуда в Россию. Ванские мастера всегда блистали своим талантом. Они сохраняли, учили и распространяли свое искусство повсюду, где бы не находились. Последователи ванских ювелиров и по сей день работают в Армении и разных странах мира.

Astghik Israelian
History Museum of Armenia
astghikisraelian@gmail.com

JEWELLERS OF VASPURAKAN (19th - 20th Centuries)

Keywords: jeweller, secular, clergymen, order, learner, workshop, rules.

Vaspurakan's jewellery carries the traditions of Armenian art in general and directly continues the culture of Van or Ararat Kingdom, which in its turn was the continuation of the Bronze Age rich art. Archaeological materials and written sources (written in cuniform) show the development and the variety of the ancient jewellery art in the Armenian Highland and the localities of the archaeological discoveries (temples, palaces, fortresses tombs, etc.) show their functions and the ways they were used.

Different historians provide valuable information about the medieval jewellery of Vaspurakan. The ritual objects and the covers of manuscripts and printed religious books also show the high level of the skillful masters. The clergymen also were engaged in jewelry making over the centuries.

In the 19th and the beginning of the 20th century, the products of Van masters were distributed in Turkey and exported to Europe, Africa and America. The jewellers used various techniques such as casting, stamping, filigree, double threading, embossing, granulating, engraving, gilting, niello, etc. Although niello was known from very early times, it began to be widely used from 1860–1870's, then passed to the Caucasus and from there to Russia. The master jewellers of Van have always been known for their talent, and they always taught, transfered and spread their skills wherever they lived. The descendants of Vaspurakan jewellers are still working in Armenia and in different countries of the world.

Ասրդիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.)

Նկ.1. Վանեցի ոսկերիչ Վահան և Վարդան Դերձակյան եղբայրները Թեհրանում՝ կանգնած իրենց խանութի առջևում: Սեպուհ Խաչատրյանի անձնական հավաքածու:

Նկ.2. Թավրիզի հայ ոսկերիչների «Կալ անելը»: Ձախ կողմից առաջինը Գալուստ Դերձակյանն է՝ Վահանի ու Վարդանի հայրը: Սեպուհ Խաչատրյանի անձնական հավաքածու:

Նկ. 3. Կույս Մարիամը և փոքրիկ Հիսուսը: Ոսկի, արծաթ: Հեղինակ Լեմվել Ավետյան-Արծրունի https://talajewelers.com/?page_id=1015

Նկ. 4. Լեմվել Ավետյան-Արծրունի Սեպուհ Խաչատրյանի անձնական հավաքածու:

Նկ. 5. Վանեցի ոսկերիչների արհեստանոցը Թիֆլիսում, «Վան-Տոսպ» շաբաթաթերթ, 1916, նոյեմբերի 27, №1, էջ 6:

Նկ. 6. Թագ, որը պատրաստվել է Իրանի շահ Մոհամմադ Ռեզա Փահլավիի (1941–1979) եղբոր կնոջ՝ արքայադուստր Մանիջեհ Ջահանբանիի համար: Ոսկի, ադամանդ: Հեղինակ Լեմվել Ավետյան-Արծրունի https://talajewelers.com/?page_id=1015